ՆՈՐ-ԴԱՐ

№ 44 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 27 Մարտի **1886** Հինգշաբթի 27 Մարտի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 44

տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. համարը 5 կոպէկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 3 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Պաստէօրի բժշկութեան առթիւ։
Քրոնիկոն.— Լուրեր։ Վնասակար միջատներ (վերջ)։
Թղթակցութիւններ.— Շուշի։
Քաղաքական.— Գերմանիա։ Լուրեր։
Խառն լուրեր։
Նոր-Դար».ի հեռագիրներ։
Բանասիրական.— Միայնի վրէժը։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 26 Մարտի 1886։

ՊԱՍՏԵՕՐԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ֆրանսիացի յայտնի պրոֆէսսոր Պաստէօրի շնորհիւ Պարիզը դարձել է այսօր կատաղած կենդանիներից խածուածների ապաստանարանը։ Եւրոպայի հեռաւոր երկիրներից կատաղած կենդանիներից (շներից, գայլերից) խածուածները դիմում են շուտափոյթ Պարիզ, երբև ուխտատեղի գիտնական Պաստէօրի մօտ, գալիք կատաղութեան ցաւից և դրան հետևող սոսկալի մահից ազատուելու համար։

Պաստէօրը երկար փորձերից յետոյ գտել է այդ տեսակ կատաղութեան դէմ ճար ու դարմանը։

Նա արհեստական ճանապարհով թունաւորում է ճագարներին, շներին, ծովային խոզերին և այդ միջոցով կատաղեցրած այդ կենդանիների ուղեղից պատրաստում է իւր լաբօրատօրիայում այն թոյնը, որով նա պատուաստում է կատաղած կենդանիներից խածուածներին։

Բազմաթիւ փորձերը ցոյց են տալիս, որ Պաստէօրը իւր գտած պատուաստման միջոցով յաջողութիւն ունի, ըստ որում բացի մի երկու անյաջող դէպքերից, այն բոլոր ախտաժէտները, որոնք Եւրոպայի զանազան կողմերից դիմել են նրա օգնութեանը, բժշկուել են, այսինքն վերահաս կատաղութիւնից զերծ են մնացել։

Դրա վերաբերութեամբ մեր ընթերցողը տեղեկութիւններ, հեռագրական լուրեր կարդացած կը լինի թերթիս մէջ։ Արդէն մտածում են Պարիզում մի հիւանդանոց հիմնելու յատուկ Պաստէօրի պատուաստման միջոցը գործ դնելու և սովորեցնելու համար։

Եւրոպական ուրիշ քաղաքներում նուիրատուութեամբ գումարներ են հաւաքվում, որպէս զի բժիշկներ ուղարկուին Պարիզ, Պաստէօրի մօտ նրա բժշկելու եղանակը սովորելու համար։

Կատաղած շներից կամ գայլերից խածուած իւրաքանչիւր մարդ այնքան միջոց չունի, որ կարողանայ գնալ Պարիզ և Պաստէօրի մօտ բժշկուել. դրա համար շատ փող է հարկաւոր։

Ուրեմն ինչ պէտքէ անեն այդ դէպքում այն բոլոր թշուառները, որոնք Պարիզից հազարաւոր վերստերով հեռու են գտնվում և միջոց չունեին իսկոյն Պարիզ ճանապարհորդելու և Պաստէօրի մօտ բժշկուելու։

Մի՞թէ դրանք դատապարտուած պէտքէ լինին անխուսափելի մահուան, և այն էլ իւր տեսակում, սոսկալի մահուան։

Եւ մի՞թէ Պաստէօրի գտած պատուաստման միջոցից առաջ կենդանիները չէին կատաղում, և եթէ կատաղում էին, մի՞թէ չէին կծում մարդկանց, և եթէ կծում էին, մի՞թէ ախտաժէտները կոտորվում էին, և մարդկութեանը յայտնի չէր մի դարման, մի միջոց, որով կարելի լինէր բժշկել կատաղած կենդանիներից խածուածներին։

Մեր ընթերցողներին եթէ առաջուց էլ յայտնի չը լինէր, «Նոր-Դար»-ից իմացած կը լինեն, որ կատաղած շներից և գայլերից խածուածներին բժշկելու միջոցներ յայտնի են մեր երկրում և կան հմուտ մասնագէտներ, որոնք յաջողութեամբ բժշկում են։ Եթէ այդ մարդկանց անունները չեն հռչակվում և անյայտ են մնում դրանց յաջողութեամբ սրած բժշկութիւնները, այդ նրանից է, որովհետև դրանք գիտնական չեն, իրենց արհեստը տեսականապէս չեն սովորել, այլ գործնականապէս։ Այդ նրա համար է, որ դրանց ըեցեպտները դեղատուններ չեն մըտնում և խիստ նահապետական, պարզ և հասարակ են լինում, հիւանդին վեդրօներով դեղեր չեն խմեցնում։

Յայտնի է, որ բժշկութիւնը ճիշտ գիտութիւն չէ, մաթեմատիկա չէ, այլ նա էմպիրական գիտութիւն է, այսինքն հիմնուած է փորձերի վերայ։ Իսկ մեր երկրում դարաւոր փորձերի վերայ հիմնուած շատ միջոցներ կան, որոնք յայտնի չեն մեր համալսարանական բժիշկներին, բայց յայտնի են մեր երկրի տեղական բժիշկներին։ Այդ միջոցները լաւ ճար ու դարման են շատ ցաւերի և ախտերի դէմ։

Ցանկալի էր, որ մեր բժիշկները անուշադիր չը թողնէին այդ միջոցները և նրանց գործադրելու եղանակը հետազօտէին, ուսումնասիրէին և գործ դնէին։ Այդպիսով իրենց գիտութիւնից, հաւատացած ենք, ոչինչ չի պակասիլ, այլ կը աւելանայ և ցաւագար աշխարհն էլ կ'օգտուի դրանից։

Կատաղած կենդանիներից ախտաժէտների դէմ, ինչպէս կը կարդայ ընթերցողը սոյն համարի քրոնիկոնի բաժնում, գործ են դնում ալաքլունգ միջատը յաջողութեամբ։

Այս բանի վերայ հրաւիրում ենք բժշկական ընկերութեան ուշադրութիւնը, քանի որ կատաղած շըներից վարակուածները խօլերայից աւելի սոսկալի մահով են մեռնում, միւս կողմից մարդկային ընկերական կեանքում բացի մի քանի տեսակ միջատներից ինչպէս ճանճը —շունը առաջին տեղն է բռնում՝ նրան կը պատահէք փողոցներում, տների բակերում, սենեակներում, նոյն իսկ ննջարաններում։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ՍՎԱՆԵԹԻՑ (Քութայիսի նահանգում) հաղորդում են «Իվերիա» լրագրին, որ երեք օր միմեանց վերայ մի կատաղած գայլ թափառելով այս և այն կողմը, զանազան գիւղերում խածել է եօթը հոգու, որոնցից մէկը մեռել է սարսափելի տանջանքներով, մէկն էլ մահամերձ է, և մնացածները առ այժմ դեռ լաւ են, բայց վտանգը սպասվում է քառասներորդ օրը։ Ինչպէս բնակիչները պատմում են Սվանեթիայում առաջին անգամն է, որ կատաղած գայլը երևում է և խածում է մարդիկներին։

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, կոմսուհի Պ. Ս. Ուվարովի միջնորդութեան շնորհիւ թագաւոր կայսրը բարեհաճել է 15,000 ր. նուիրել հարաւային Ռուսիայում և Կովկասում հնագիտական հետազօտութիւններ անելու նպատակին։

—

Ներկայ 1886 թ. ամառը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, մի քանի ռուս և օտարազգի գիտնական ճանապարհորդներ կ'այցելեն Կովկասը ուսումնական նպատակով։ Դրանց թւումն են՝ երիտասարդ բուսաբան իշխ. Մասալսկին, որը վաղուց ի վեր պարապում է Կովկասի Փլօր և Ֆաուն հետազօտութիւնով և կը կատարէ բուսաբանական հետազօտութիւններ հարաւ-արևմտեան Կովկասում. պ. Վօյինովը կ'այցելէ ազգագրական հետազօտութիւնների նպատակով և պ. Պաւլովսկին կը հաւաքէ տեղեկութիւններ Կովկասեան ցեղերի իրաւաբանական սովորութիւններից։ Իսկ օտարազգիների թւում ֆրանսիացի պ. Լուի Դիւ-Պլեսսին կայցել է Կովկասը հնագիտական հետազօտութիւններ անելու նպատակով։

—

Օտարազգի լրագիրների ասութեամբ, Պարիզի «Hôtel Dieu» հիւանդանոցում վախճանող Սմօլենսկի գիւղացու դիակը սկսեց կտրատել անդամահատ բժիշկ Կօրնիլը, Պաստէրի, Բուլ և Բիշէր բժիշկների և ուսանողների ներկայութեամբ։ Ներսի գործարանները այնպիսի դրութեան մէջ էին, ինչ դրութեան մէջ լինում է օձի կծածից առաջացած տկարութիւնը։ Մահը յառաջացել է շնչառութեան ընդհանուր կաթուածից։ Թոքերը լի էին արեան կըտորներով, ինչպէս և ամբողջ կրծքի և խուչափողի չերտերը։ Լեզուն և խուլերը չափազանց ուռած էին։ Ողնաշարի ուղեղը բորբոքուած դրութեան մէջ էր, գլխի ուղեղը թէև մասամբ լցուած էր արիւնով, սակայն առողջ էր և ամուր կեղևը ունէր կանոնաւոր դրութիւն։ Երակի մէջ գտան գայլի արդէն փչացած ատամի կտորը։ Պաստէրը վերցրեց ուղեղից մի մեծ մաս, որ ենթարկէ նրան մանրացոյցի քննութեան։ Ցետ այնորիկ մի շարք փորձեր կը լինեն այդ մասերով շների, ճագարների և ծովային խոզերի վերայ։

«Temps» լրագիրը ասում է, թէ այդ հանգուցեալը Սմօլէնսկի գաւառի Բէլօյ գիւղից էր, 50 տարեկան, Մաթէոս Կայրանով անունով։ Ռուսական եկեղեցում հոգեհանգստեան պատարագ կատարելուց յետոյ, Դրիւ փողոցում, տարան և թաղեցին Բատինիօնի հանգստարանում։ Թաղման հանդիսին ուղեկցում էր սև կառքում նստած ռուսական հիւպատոս բարոն Մօրէնհէյմը։

—

ՍՈՒՐԱՄԻՑ.— Ալի գիւղը գտնվում է Սուրամի արևելա-հիւսիսային կողմը 7 վերստ հեռաւորութեամբ։ Այս գիւղից երեք վերստ հեռու, արևմտեան կողմը գտնվում է մի անտառոտ սար Քուչավան անունով. դրա մէջ գտնվում է սև քարահանք։ Բնագէտների ասելով այդ իսկ մարգանեցի հանքն է։ Այդ հանքը համեմատելով Ճիաթուրայի հանքի հետ, աւելի լաւ է։ Հանքի կտորները շատ սև և պսպղուն են, չօշափելուն պէս մարդու ձեռքը սևացնում են թանաքի նման։ Քարի կտորի հետ համեմատելով շատ ծանր է։ Այս հանքի կտորներից շատ վաճառականներ տարել են Թիֆլիս փորձելու համար։ Այդ նորագիւտ մարգանեցի հանքը պատկանում է ազնուական Միխայէլ Ցիմակուրիձէի կնոջ Մարիամին։ Այդ հանքի տարածութիւնն է 214 դեսիատին։ Այդ հանքի տիրուհի Մարիամը ցանկացողներին կապալով տալիս է։ Հանքի մօտ գտնվում է իշխան Սէմիէ Ամիրէջիբի մեծ տարածութեամբ խիտ անտառը անհագին ծառերով։ 1872 թուականից սկսած մինչև այժմ կապալառուները կտրատում են այդ անտառից Անդրկովկասեան երկաթուղու գծի տակ դարսելու համար գերաններ։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ.— Այստեղ փետրվար ամսի վերջերում գարնան նշաններ երևացին, բայց շուտով վերահասաւ մարտը բերելով իւր հետ փոթորկալի և ցուրտ օրեր։ Շուտով դաշտերը ծածկուեցան սպիտակ ձիւնի սաւանով, որոնք մի կողմից արդէն հերկվում էին։ Ցրտի սաստկութիւնը մեզ յիշեցնում է յունվարը։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.— Ջնայած տեղիս մաքսային կառավարութեան խիստ հսկողութեանը, դարձեալ մի քանի կոմիսիօնների յաջողվում է զանազան խարդախ միջոցներով դուրս կորզել մաքսատնից զանազան ապրանքներ ի թիւս որոց նոր նոր մեշոքներ. ի հարկէ աւելորդ է այնքան մեծ մաքս տալը, քանի որ արտաքուստ ցեխոտած նոր մեշոքը փոխարինում է հնի։ Այդ ձևով մի քանիսին յաջողվում է աչքակապութիւն անել։

—

ՆՈԹՑ ՏՆՂԻՑ.— Ցորենի գինը զգալի կերպով բարձրանում է։ Այն ցորենը, որը մի ամիս առաջ պուտը արժէր 85 կ., այժմ արժէ 1 ր. 10 կոպէկ։ Առ հասարակ ցորենի առևտուրով յոյներն են պարապում, որոնք խմբերով գալիս են արտասահմանից և այնտեղ ուղարկում իրենց վաճառքը։

—

ՂԱԹԱՐՈՒ պղնձահանքից.— Անցեալներում Զափնի գիւղացի հինգ պատանիներ գնում էին Բազու մշակութեան։ Զափնուց 20 վերստ հեռաւորութեան վերայ գտնուող Բարկուշատ գետով անցնելիս (որանք հետևակ էին) գետը հինգին էլ տանում է։ Բարեբաղտաբար Թիւրք ճանապարհորդներ են պատահում և 4-ին ազատում են, իսկ մէկի միայն դիակն են գտնում։ Խեղդուածը Զափնի գիւղացի Տէր Սողոմոնի 15 տարեկան տղան է լինում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.— Մինչև մարտի 6-ը Օդեսսա գնացող շոգենաւերը, այնտեղի ձմեռնային խստութիւնից, որից սառել էր Սև ծովի հիւսիսային եզերքը, գընում էին շաբթէնը մէկ անգամ, մօտ 40 օր շարունակ, բայց մարտի 6-ից կանոնաւոր ընթացք ընդունեց նաւագնացութիւնը։ Այժմ շոգենաւը շաբթէնը երկու անգամ —հինգշաբթի և շաբաթ օրերը— ուղևորվում է դէպի Օդեսսա։ Ինչպէս երևում է, Սև ծովի հիւսիսային ափը ազատուած է սառցապատ կեղևից։

—

Մեզ գրում են.— Ուղարկում եմ պատուական խմբագրութեանդ, «Նոր-Դար»-ի № 39-ի մէջ հրատարակուած իմ գրութեանս մէջ յիշուած ալաքլունգ միջատից մի քանիսը. որ ինչպէս զօրաւոր միջոց գործ է դրվում կատաղած կենդանիների կծածի դէմ։

Ալաքլունգը ստանալու համար դիմած էի Ուզունլար (Օձուն) գիւղի մի արժանահաւատ և գործին հմուտ անձի, որից ստացայ հետևեալ բովանդակութեամբ պատասխանը «կատաղած կենդանիներից վիրաւորուածներին տրվում է ներփակեալ ալաքլունգ կոչուած միջատից այս եղանակով։ Ալաքլունգը փոշի են դարձնում և լաւ խառնում են գինու հետ (գինի չեղած տեղը կարելի է հացի օղի գործածել) և առաւօտը անօթի խմեցնում են հիւանդին։ Խմելուց յետոյ հիւանդը պէտք է մանգայ անպատճառ գոնէ երեք ժամ։ Այնուհետև կարող է նա նախաճաշել, հաց ուտել, միայն մածուն, կաթ գործածելը խստիւ արգելվում է։

Ալաքլունգի գործածելու չափը այսպէս է. վիրաւորուածի հասակին նայելով պէտք է վերցնել փոշի դարձնելու համար 4 հատից մինչև 8 հատ։ Պատանուն պէտք է 4 հատ տալ, իսկ հասակը առածին մինչև 8 հատ։»

Այդ պատասխան գրողը յայտնում է ինձ, որ այդ միջոցով շատերին առողջացրել է և թէ ալաքլունգը ուրիշ մի քանի ներքին ցաւերի դէմ էլ լաւ ներգործող «դեղ» է, որոնց դէմ ինքը յաջողութեամբ գործ է դնում։ Օգոստոս ամսին նա մի քանի օրուայ ընթացքում նշանաւոր քանակութեամբ ժողովում է ալաքլունգից և երբ հարկաւոր է լինում՝ վաճառում է նրա մսխալը մէկ րուբլի։ Ինչպէս հաւա-

տացնում են ալաքլունգի գործածելու գիտութիւնը այդ կողմի գիւղերում մը՟նացած է հանգուցեալ Նիփոն կաթողիկոսից՝ նրա Հախպատ եղած ժամանակից։

ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐ *)

(Վերջ)

Bhynchites betuleti (Րինխիդէս բէտուլետի)։ Ձուերը դնելու համար բազմնաւորուած էգը տերեններից խողովակներ է պատրաստում։ Դրա համար նա կրծում է առաջուց շառաւիղները և կամ առանձին տերենների կոթերը։ Դըրանով նա արգելք է լինում հիւթի շարժման, որից տերենները սկսում են չորանալ և կծկուիլ։ Տանձենիների վերայ երբեմն մի խողովակ շինելու համար, միմեանց կպցնում են մինչև 18 մատաղ տերեններ։ Իւրաքանչիւր մի խողովակի մէջ էգը դնում է 3—4 ձու։ Տասն օրից յետոյ դուրս են գալիս թըրթուրները, որոնք բնակվում են խողովակի մէջ և կերակրվում են խողովակ կազմող տերեններով։ Հինգ շաբաթից յետոյ նրանք հասնում են կատարեալ մեծութեան և մտնելով մինչև 1½ գիւմ խորութեամբ գետնի մէջ բոժոժվում են։ Շատ բզէզներ բոժոժից դուրս են գալիս աշնան, օգոստոսից սկսած և ձմեռում են։ Տարուայ ընթացքում սըրանցից առաջանում է միայն մի սերունդ։ Սրանց դէմ մաքառելու միջոցները միենոյններն են, որոնք առաջարկուած են Bhynchites-ի միւս տեսակների դէմ։

Anthonomus pomorum (Անթօնոմուս պօմօրում)։ Գլուխը, կուրծքը և ոբովայնը սև գոյն ունեն և ծածկուած են բարակ մոխրագոյն մազերով։ Ոտները և շօշափուկները ժանկա-մոխրագոյն են։ Հասնում է 2 գծի։

Այս բզէզը շատ տարածուած է, գըտնվում է բոլոր Եւրոպական Ռուսիայում և նոյնպէս Մեզանում։ Բնակվում է գլխաւորապէս խնձորենիների վերայ։

Ձմեռելով խնձորենու ճեղքերում և կամ վայր ընկած տերենների տակ, բըզէզը երևում է ապրիլ ամսում և շուտով զուգաւորվում են էգ ու որձը։

Էգը կնճիթով ծակ է բանում կոկոնի վերայ և այդպիսով ոչնչացնելով շատ կոկոններ, վերջապէս դնում է ձուն այդ ծակերից մինում։ Մի շաբաթից յետոյ դուրս է գալիս թրթուրը և երեք շաբաթից յետոյ հասնում է կատարեալ մեծութեան։ Բոժոժվում է արդէն շառագունած կոկոնի ներսում և 8—10 օրից յետոյ թռչում է բզէզը։ Այն դէպքում երբ ձուերը դնելուց յետոյ եղանակը ցրտում է, կոկոնները աւելի ուշ են բացվում, իսկ ընդհակառակը թրթուրները շուտով ձուերից դուրս գալով, բոլորովին ոչնչացնում են կոկոնները։ Բայց երբ եղանակը տաք է լինում, կոկոնները բացվում են աւելի առաջ քան թէ ձուերից դուրս են գալիս թրթուրները, որոնք մերկ մնալով կոտորվում են մեծ քանակութեամբ։ Թրթուրները ուտում են գլխաւորապէս ծաղկի բեղմնաւորութեան գործարանները և շատ անգամ նոյնպէս խոչը։ Չորացած և շառագունած ծաղիկները հեռուից անգամ յայտնում են թրթուրների ներկայութիւնը։ Մայիսի վերջերում և յունիսի սկզբներում բզէզը դուրս է գալիս բոժոժից և չորացած ծաղկի միջից անցք բացանելով դուրս է գալիս։ Այս բզէզները շատ վախկոտ են։ Բաւական է մօտենալ նրանց, իսկոյն վայր են ընկնում գետնին և երկար ժամանակ մնում են անշարժ, կուրծքի վերայ սեղմելով կնճիթը և ներս քաշելով ոտները։ Սըրանց դէմ մաքառելու համար խորհուրդ են տալիս ընտրել այնտեսակ խնձորենիներ, որոնք ուշ և արագ են բացվում և որոնք ունեն աւելի փակուած կոկոններ։

Սրանով առ ժամանակ մենք դադարեցնում ենք մեր նկարագրութիւնը վնասակար միջատների վերաբերմամբ։ Մեր առաջին նամակում *) խօսելով վնասակար միջատների նշանակութեան վերայ գիւղատնտեսութեան վերաբերմամբ, ասացինք որ մեզ յայտնի վնասակար միջատների տեսակների թիւը ներկայումս հասնում է 550-ի **)։ Համեմատութեամբ մեր նկարագրած վնասակար միջատների տեսակների թիւը վերաբերեալ թուի հետ չնչին է։ Սակայն մենք խոստանում ենք աւելի յարմար միջոցում լրացնել մեր պակաս թողածները։

Չը նայելով, որ մենք մեր բոլոր նկարագրութեան ժամանակ ձեռքներս տակ ունէինք ամենաընտիր օրինակներ վնասակար միջատների վերաբերմամբ, այնուամենայնիւ հաւանականաբար մեր նկարագրութեան մէջ կգտնուեն այնպիսի կէտեր, որոնց գործադրութիւնը անկարելի է մեր երկրի կլիմային նայելով։

Այդպիսի կէտերի պարզաբանութեան յոյսը, ինչպէս մեր առաջին նամակներում ասած ենք, մնում է ապագայի մեր անելիք փորձերի վերայ։ Մենք յոյս ունենք, որ վերջապէս մենք էլ ուշք դարձնենք մեր երկրի և նրա արդիւնաբերութիւնների վերայ։ Ուսումնասիրելով մեր երկրի մշակութեան ձուերը, կհետաքրքրուենք և աչքից չենք թողնի այն կողմնակի հանգամանքները, որոնք արգելք են լինում լիովին ստանալու մեր երկրի արդիւնաբերութիւնները։

Բ. Արտազ.

Ռւման

*) Տես «Նոր-Դար» № 35.

*) Տես 1885 «Նոր-Դար»-ի 2

**) Տես 1885 «Նոր Դար»-ի № 129. սխալմամբ դուրս է եկած 550,000.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՇԻ 16 մարտի—Հին ժամանակներում եթէ հայ ժողովրդի մէջ լսվում էր լուտերական կամ բողոքական անունը և հետևաբար եթէ լոյս էր ընկնում, որ մի հայ թողել է իւր ազգ. եկեղեցին և դիմել բողոքականութեան գիրկը՝ ժողովուրդը նրանից ձեռք էր վերցնում և արտաքսում էր իւր միջից... մինչև որ այնպիսին կամ գլուխ վերցրած կորչում էր ի տար աշխարհ և կամ կատարեալ զղջմամբ դառնում էր հայրենի եկեղեցւոյ ծոցը։

Սրանից երևակայելի է, թէ հայ ժողովուրդն առաջ ինչ խստութեամբ էր պաշտում իւր եկեղեցին և դաւանում իւր կրօնը։ Սակայն այսօր մենք որչափ տարբերութիւն ենք կազմում մեր նախկին և այժմեան ժողովրդի մէջ մեր եկեղեցւոյ վերաբերմամբ։ Եւ ինչից յառաջացած է այս մեծ տարբերութիւնը, եթէ ոչ մշտական քարոզիչներ և արժանաւոր քահանաներ չունենալուց։

Հէնց որ գալիս է մեծ պասի ապաշխարութեան օրերը, մենք մտաբերում ենք եկեղեցին, մտաբերում ենք քարոզը և զգում ենք նրա նշանակութիւնը։ Բայց միթէ տարուայ մնացեալ օրերն ժողովրդին քարոզ չէ պէտք։ Այո, քարոզը պէտք է հայ ժողովրդին. նա այդ զգում է ամեն ժամանակ և ոչ թէ Մեծ պասի օրերում միայն. Քահանան միշտ պարտաւոր է եկեղեցւոյ բեմից աւանդել Քրիստոսի բանաւոր հօտին նրա հիասքանչ պատգամները։ Նա ոչ թէ քահանայ է լոկ օրինակատարութեան համար, այլ և պարտաւոր է ամեն մի նուագում, ամեն մի տեղ, թէ եկեղեցում, թէ տանը և թէ «ուր ժողովեալ են երկու կամ երեք յանուն իմ», քարոզել Աստուծոյ բանը։

Տարաբաղդաբար մենք այսօր չունենք այն քահանաները՝ ոչ միայն գիւղերում, այլ նոյն իսկ և քաղաքում (խօսքս ընդհանուրի համար է և ոչ մի քանի քահանաների), որ կարողանային և ընդունակութիւն ունենային քարոզ խօսելու և ժողովրդի միամիտ դասին հասկացնելու եկեղեցւոյ, կրօնի, Աստուածպաշտութեան, ընկերսիրութեան և այլն նշանակութիւնը։ Ի՞նչ որ եղել է մինչև այսօր, մենք չենք կարող դրան մի բան աւելացնել. ինչ որ մեր նախկին առաջնորդները գիւղական տգէտ ու անկիրթ քահանաներ են ձեռնադրել, նրանք իրենց կարգում կ'անցնեն, կը գնան, բայց այլ ևս տգէտ քահանաներ չունենալով հանդերձ հոգևոր իշխանութիւնը իւր ժողովրդին բանիմաց և առաւելապէս քարոզիչ հոգևորականներ տայ, որոնք կարողանային մինչև ցարդ ժողովրդի մէջ արմատացած վէրքերն ամոքել և դարմանել. եթէ ոչ, այս դրութեան մէջ մնալով պրօպագանդայի մոլար քարոզութեան համար լայն ասպարէզ կը բացուի և գառնազգեստները... կը յափշտակեն հարազատ գառնուկներին որբանուէր մօր—առաքելական եկեղեցւոյ գրկից։ Այս մենք փորձով տեսնում ենք հէնց այսօր ևս։

Ինչպէս լսում ենք, թեմիս սրբազան Առաջնորդը կարգադրել նշանակել է քաղաքիս եկեղեցիներում քարոզիչ քահանաներ այս մեծ պասի կիւրակէ օրերը ժողովրդին քարոզ խօսելու. իսկ գիւղերում կարգել է—Վարանդայում Գանձասարու վանքի վանահայր Սոփիանոս վարդապետ Շիրականում և Ջրաբերդում Վանք (Գանձասար) գիւղի ծերունի Պետրոս քահանային, որոնց և պատուէր է է տուել մինչև Զատիկ շրջելով գիւղէ գիւղ՝ քարոզել ժողովրդին Աստուծոյ խօսքը։ Որքան մենք գիտենք, այս երկու քարոզիչ կոչուածները ոչ աստուածաբանական ճարտար գիտութիւն ունին և ոչ բանախօսական ընտիր յատկութիւն. սակայն, ինչքան էլ նրանք այս գիտութեանց տէր անձինք չեն, մնացածներից գոնէ համեմատաբար բարձր են... Ի վերայ այսր ամենայնի գովելի է առաջնորդի ներկայ տնօրէնութիւնը։

Քարոզը մեծ նշանակութիւն ունի հայ ժողովրդի համար։ Ինչպէս մի բըժիշկ մեծ խնամքով լուանում է իւր հիւանդի վէրքերը, բուժիչ դարմաններ է տալիս նրան, նոյնպէս և քահանան իւր առանձնած հօտի ամեն մի անհատին պարտաւոր է խնամել, նրան հոգեկան պաշար տալով իւր քարոզութեամբ։ Քահանայի այս ազդեցութեան տակ անհատը անշուշտ կունենայ այն բոլոր յատկութիւնները, ինչ որ յատուկ է մեր եկեղեցուն։ Եւ ինչպէս կենսական կարեւորութեան տագնապն ստիպում է մի աղքատին, մուրացկանին ձմեռուայ ձիւներին և բուքերին դռնէ դուռն թափառել և մի կտոր հաց մուրալ՝ նրանով իւր անանկ մերկ զաւակների օրական պարէնը հայթհայթելու, նոյնպէս պիտի ըզգանք, որ մի հոգեկան զգացման տագնապ ամեն օր հրաւիրում է մեզ եկեղեցի գնալ, աղօթել, լսել Աստուծոյ պատգամները և նրանց մեր սրտի տախտակամածի վերայ անջինջ և թարմ պահել և կատարել մեզ աւանդածները։ Այս մի անխուսափելի պարտականութիւն է, որին, կարծեմ, ամեն մի անհատ կարող է լըջմտութեամբ համոզուել և ենթակայ լինել։

Կնքելով մեր յօդուածը՝ այս բոլորի հետ մենք խնդրենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը, այսուհետև գոնէ տգէտ քահանաներ չը տալ մեզ և միայն արժանաւորագոյններին ձեռնադրել քահանայութեան վսեմ աստիճանով, որ նրանք կրթեն իրենց ժողովրդին աւետարանական ոգով, վարդապետեն ճշմարիտ աստուածպաշտութիւնը և իրենց իմաստալից քարոզներով պարարեն նրանց հոգիները

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՊԱՅԻ *) ՎՐԷԺԸ

Սէր Րիչարդ Պառլսոնը, որ անգլիական ամենայայտնի ընտանիքներից մէկին էր պատկանում, սիպաների հանդարտուելուց յետոյ շուտով գնաց Արևելեան Հնդկաստան և մի քանի շաբաթ մնաց Կալկաթայում իւր բարեկամ գնդապետ Համիլտօնի մօտ։ Եղանակը նրան այնպէս տաք թուաց, որ նա վճռեց միայն երեկները դուրս գալ և այն ժամանակ գլանակ ծխելով նա փողոցներում թափառում էր, մըտախոհ տեղացի սևերին նայելով, որոնք կարծես արեգակի ճառագայթների ազդեցութիւնը երբէք չէին ըզգում։

Մի երեկոյ նա գնաց Բայխա, որ Կալկաթայից անգլիական երեք մղոնով է հեռու և ուր մեծ մասամբ եւրոպացիներ են բնակվում։ Նրա ուշադրութիւնը յանկարծ երկու կանանց վերայ դարձաւ, որոնք ձեռնածութիւններ էին անում։ Նրանցից մինը պառաւ էր, իսկ միւսը ջահել և անչափ գեղեցիկ։ Նրա սև աչքերը, սքանչելի մազերը, հիանալի դէմքը և կազմուածքի կատարելութիւնը իւրաքանչիւր նկարչի կը հիացնէին։ Սէր Րիչարդը կանգնելով սկսեց ձեռնածութիւններին նայել, որ մեծ մասամբ բաղկացած էր մատանիներ և գնդակներ ձըգելով, որով առաջիններից զանազան ձևեր էին կազմվում, մինչդեռ վերջինները կամ երևում էին կամ անյայտանում։ Հնդկական ձեռնածութեան անծանօթ Սէր Րիչարդը անհասկանալի էր գտնում այդ ամենը։

Երիտասարդ աղջիկը տեսնելով նրա զարմանքը, մօտեցաւ նրան և ձեռքը մեկնելով փող խնդրեց։ Նա դրեց մի մեծ ոսկէ դրամ, այնպէս որ աղջիկը նրան շնորհակալութիւն արաւ արևելեան ամենաընտիր ձևերով։

Սէր Րիչարդը հիացած էր ոչ թէ միայն աղջկայ գեղեցկութեան վերայ, բայց և նրա վարուողութեան վերայ և այդ պատճառով սկսեց նրա հետ խօսել. թէև աղջկայ համար ընդունելի էր երևում այդ, բայց և այնպէս նա ոչ մի խօսք չէր հասկանում։ Սակայն կանգնելով սևաչեայ գեղեցկուհու մօտ Սէր-Րիչարդը լսեց օձի շուացի նման մի ձայն, շուռ գալով տեսաւ սիպայի կատաղի դէմքը, որ դաղտագողի դանակը ձեռքին, մօտեցել էր նրան։

—Ի՞նչ ես ուզում։ Ակամայ յետ գնալով հարցրեց Սէր-Րիչարդը։

Սիպան իսկոյն լեզուով ինչ որ ասաց և կրակոտ աչքերով մօտեցաւ անգլիացուն։ Որպէս երևում էր երիտասարդ աղջկայ ամուսինն էր նա, որի գեղեցկութիւնը անգլիացուն այդպէս գրաւել էր։ Եւ նախանձով ալեկոծուած նա մտադրուել էր կոտորել նրան։

Բացի փայտից Սէր-Րիչարդը իւր մօտ ոչինչ զէնք չունէր, սակայն հըմուտ մենամարտող էր, հետևապէս բարձրացնելով փայտը նա այնպէս հարուածեց սիպայի ձեռքին, որ նրա ձեռքի դանակը ընկաւ հեռու, կրկին անգամ հարուածեց ուղղակի նրան, այնպէս որ սիպան ստիպուած էր փախչելու։

Սէր Րիչարդն էլ տաքացած ուղղուեց դէպի տուն, տեսնելով որ երկու կանայքն էլ փախել են։

Երբ նա իւր արածը գնդապետ Համիլտօնին պատմեց, նա ծիծաղեց և աւելացրեց. Այնուամենայնիւ այդ սիպայից զգուշացէք. նա կարող է մի որև է անկիւնից դանակը խրել ձեր կուրծքը, մինչև որ ձեզնից վրէժը չը հանի, նա չի հանգստանալ»։

—Թող միայն փորձի, պատասխանեց Սէր-Րիչարդը։ Այսօրուանից ըէվոլվեր հետս կունենամ և շատ ցաւում եմ որ այն ժամանակ մօտս չէր, եթէ ոչ ես նրան կը հիւրասիրէի։

—Դրանք կատաղի շներ են, մենք այդ հէնց նոր վերջացած պատերազմի վերջերին փորձեցինք։

Սրանով խօսակցութիւնը վերջացաւ։ Միւս օրը երեկոյեան երկու ընկերները դուրս եկան միասին զբօսնելու։ Նրանց մօտեցաւ եւրոպական զգեստով մի հնդիկ և խորին կերպով գլուխ տուեց։

—Արդեօք անգլիացի պարոնը չի կամենալ բարի լինել և տալ ինձ իւր այցետոմսը. անգլիական բեկուած լեզուով ասաց նա Սէր-Րիչարդին։

Առանց երկար մտածելու իւր այցետոմսը տուեց նրան։

Ցետոյ անգլիացին հարցրեց. «Ձեր ինչին է պէտք, դուք ո՞վ էք, տուէք ինձ ձերը»։ բայց խնդրողը կրկին խոնարհ գլուխ տուեց և իսկոյն ամբոխի մէջ անյայտացաւ։

—Անհասկանալի վարուողութիւն, զարմացած ասաց անգլիացին, ինչ էր հարկաւոր այդ մարդուն։

—Հա՛, ես կարծում եմ, որ երեկուայ սիպան վճռել է ձեզանից վրէժը հանել և նա մի բան կանէ անպատճառ։

Այս դէպքը այնպէս բարկացրեց Սէր-Րիչարդին, որ նա մտածեց իւր Հնդկաստանում մնալը մի առ ժամանակ վերջացնել. մի քանի օրից յետոյ նաւով Անգլիա գնաց։

Հայրենիքում ոչ մի բանից վախենալու առիթ չունենալով, Սէր-Րիչարդի յիշողութիւնից բոլորովին կորաւ Արևելեան Հնդկաստանում պատահած անցքը, իսկ եթէ երբեմն յիշում էր, այն ևս առանց ահի։

Մի ժամանակ տուն վերադառնալով նա իմացաւ որ իրեն մի ծրար են բերել գեղեցկաշէն արկղի նման-

Հասցէն իսկ հնդկական թանաքով էր գրուած, դրա վերայ ևս օտարոտի բանալի էր կնքուած և մի խնդիրք էլ էր գրուած, որ ուղարկածը բարեկամաբար ընդունի։

—Անծանօթ բարեկամի ուղարկածով զարմացած, Սէր-Րիչարդը բանալին շուռ տուեց, կողպէքը խոնարհուեց և զսպանակով ամրացրած խուփը մի ակընթարթում բարձրացաւ։

Բայց ո՜հ թշուառութիւն, խուփի հետ միասին բարձրացաւ վիթխարի օձի տափակ գլուխը և հաստ ու հարթ վիզը, որ խուփի կրկին ծածկուելուց աւելի շատ կարողացաւ դուրս բերել։

Ինքն էլ, իւր մոլորուելու առաջին րոպէում չիմանալով թէ ինչ է անում, երկու ձեռքով օձի վիզը բռնեց, որ այնուամենայնիւ աշխատում էր արկղից դուրս սողալ, մինչև որ վերջապէս 15 ոտնաչափի երկայնութեամբ ձգուեց յատակի վերայ։

Սէր-Րիչարդը շատ ուժեղ լինելով բռնել էր հրէշի վիզը—որ կատաղեալ և ամեհի [illegible] օձ էր։ Սակայն նա չը կարողացաւ օձին արգելել, որ իւր ոտքերին չփաթաթուի և սարսափանաբար ահեղ զօրութեամբ չը սեղմի նրանց։ Բայց դեռ ևս յաղթութիւնը իւր կողմն էր և եթէ միայն նրա ույժը չը թուլանար այդ սոսկալի կռւում, նա յաղթող դուրս գար, նա երկիւղ էր կրում, որ մի գուցէ սաստիկ սեղմուելուց նրա ոտքերը փշրուեն։

*) Սիպայ. Արևելեան Հնդկաստանի զինուոր։

և ջերմութեամբ շաղկապած պահեն նըրանց հայրենի եկեղեցւոյ հետ։

Արգամ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ։ Մարտի 26-ին ռէյխըստագում նշանակուած էր խմիչքի մենավաճառութեան մասին կազմած օրինագծի երկրորդ ընթերցանութիւնը։ Առաջինը խօսեց պարլամենտական կօմմիսիայի զեկուցանող և պատգամաւոր Հերտլինգը, յայտնելով թէ կօմմիսիան մերժեց ոչ թէ միայն նախագիծը, այլ նաև նրա մէջ անելի բոլոր փոփոխութիւնները, նոյնպէս օղիի, սպիրտի և նրանց վաճառելու հարկի մասին մի որև է նոր տեսակ առաջարկը։ Ցետ այնորիկ սկսեց ճառ խօսել Բիսմարկը։ «Երկրորդ ընթերցանութեան ժամանակ, դուրս գալով ատեան ճառով, ես մտադիր չեմ ազդելու ժողովին, որ նա ընդունէ մենավաճառութիւնը։ Այս տեսակ հարցերը մեր պարլամենտական սովորութեամբ, վճռվում են նախ քան առաջին ընթերցանութիւնը, առհասարակ կուսակցութիւնների նիստերում, այնպէս, որ հասարակական նիստերում քննութիւնը ունի միայն ձևական նըշանակութիւն։ Կուսակցութիւնները մերժեցին մենավաճառութիւնը արդէն այն ժամանակ, երբ դեռ ես անտեղեակ էին օրինագծի բովանդակութիւնից։ Նախագծի կօմմիսիային յանձնելը սոսկ ձևականութիւն էր, նա մանաւանդ, որ կօմմիսիան իրականապէս ոչինչ չարեց և նրա դէպի կառավարութիւնը ունեցած յարաբերութիւնները կարելի է պարզաբանել հետևեալ օրինակով։ «Ենթադրենք, թէ իմ զեկուցանողներից մինը առաջարկեց ինձ իւր նախագիծը, և ես պատասխանում եմ, թէ բոլորովին հաւան չեմ նրա կարծիքներին։ Շատ լաւ, այն ժամանակ ամեն բան վերջանում է և ես կարիք չեմ զգում այդ տեսակ միջոցի մէջ։ Իսկ եթէ ես զեկուցանողին ասեմ, որ նրա աշխատութիւնը ոչ մի բանի պէտք չէ, և թէ նա պէտք է առաջարկէ նոր նախագիծ, նա ինձ 'ի հարկէ կը հարցնէ. թէ այդ նոր նախագիծը ինչ ուղղութիւն պիտի ունենայ և թէ առաջինի պակասութիւնը ինչ է։ Ասենք թէ ես կրկնում պատասխանել, որ խորհուրդներ հարցնելը և նախագիծ կազմելը իմ գործը չէ, այլ նրա գործն է։ Զեկուցանողը 'ի հարկէ կը լաւ և քաղաքավարութեամբ դուրս կը գնայ գրասենեակից, բայց իւր յետևից դուռը փակելու ժամանակ իւր մէջ, կամ լսելի ձայնով, նա ինձ այնպիսի մի խօսք կ'ասէ, որ համաձայն պարլամենտական սովորութեան, ես չեմ վստահանում կրկնել այստեղ նրա խօսքերը։ Կօմմիսիան, անպէտք համարելով կառավարութեան նախագիծը մերժեց, բայց զլացաւ ասելու, թէ ինչպէս պիտի արած։ Կօմմիսիան մեզ հետ աչքակապուկ խաղաց և չը կամեցաւ ասել, թէ ինչ պէտքէ արած որ աւելի լաւ լինի»։ Վինդհօրստը կամենում էր, որ պետական կանցլերը մասնակցէր կօմմիսիայի պարապմունքներին։ «Ես այնտեղ ինչ պիտի անէի։ Ես կը նմանէի այն ժամանակ բաբելոնեան գետերի վերայ եղած հրեաներին (ծիծաղ)։ Պաշտպանելով մի որև է օրինագիծ, բոլորովին իրեն համար չէ դուրս գալիս ասպարէզ։ Մենք, ինչպէս և դուք, կարող ենք սպասել, թէև Ռիխտէրը մեղադրում է ինձ մի ինչ չահասիրութեան մէջ, որի համար, եթէ նա լինէր մի մասնաւոր անձը և ոչ պատգամաւոր, ես նրան դատի կը կանչէի։ Բայց և այնպէս իմ մասին գաղափարը արդէն կազմուած է և այդ այլ ևս կարող չէ նա. դրա համար նրա կշիռը շատ փոքր է»։ Ցետոյ իշխան Բիսմարկը ապացուցանում է, թէ սպիրտի և օղիի վերայ հարկ դնելու ժամանակ, հարկաւոր է 'ի նկատի ունենալ, ինչպէս օղի քաշողների շահերը, նոյնպէս և գիւղատնտեսների շահերը, պէտք է յիշել նաև այն՝ որ հարկաւոր է թեթևացնել ժողովրդի հարկատուութեան ոյժը և թէ շատ համայքների ոյժը չէ պատում ծածկել տեղական վարչութեան և դպրոցների պահպանութեան համար ծախքերը։ Օղիի առևտուրի վերայ հարկը իրաւացի կը լինէր, որովհետև պանդոկ պահողները օղի քաշողներից աւելի են աշխատում։ Նրանք հեշտութեամբ կարող են հարկը վճարել, թէ և շատերը չէին կամենալ դիպչել միկիտաններին, ինչպէս պարլամենտական ընտրութիւնների ժամանակ օգտակար անձինքներ։ Եւ այսպէս հարց է առաջանում, թեթևացնել արդեօք խմիչքի գործածութիւնը թէ արդիւնաբերութիւնը։ Արդիւնաբերութեան վերայ հարկ դնելով մենք 'ի հարկէ, լաւ օգուտ ու մուտք կունենանք, բայց չենք պակասեցնել արբեցողութիւնը, որովհետև դրանով օղին մի շ կ ա լ ի կ ը (խմիչքի չափ) չի թանկանայ։ Բայց ինչ կը լինի արդիւնաբերութեան գործը։ Այս բաւական չէ, կը վնասուի և հողագործութիւնը, որովհետև հաշուից կ'երևէր որ հողագործը կարող է մի ց ե ն տ ն ե ր կարտօֆիլի համար վըճարել միայն կէս մարկ։ Այդ քան փողով չի կարելի կարտօֆիլ արդիւնաբերել։ Այդ վնաս կ'լինէր։ Եւ այդպէս եթէ աւելացնէինք հարկը արդիւնաբերութեան վերայ, այն ժամանակ դայութիւն կունենային միայն խոշոր գործարանները»։— Ցետ այնորիկ իշխան Բիսմարկը յայտնում է, թէ խմիչքի գործադրութեան հարկի մասին ժողովին կառաջարկուի օրինագիծ, գուցէ առաջարկուին և մի քանի նախագծեր, որ պարլամենտական կօմմիսիան կարող լինէր ընտրողութիւն անել։ «Ես սպասում եմ որ այդ հարցերը անմիջապ՚ս վճռուին։ Ես հանգիստ սպասել չեմ կարող։ Իմ ապագան մութն է։ Ես երիտասարդ չեմ և հետզհետէ զրկվում եմ առողջութիւնից։ Ո՞վ գիտէ. կարող եմ արդեօք երկար վարելու պետական գործերը։ Պետութեան բարեբարութիւնը պահանջում է, որ նրա ֆինանսները ամուր լինեն։ Ես առաջ կարծում էի, թէ ռէյխստագը պիտի պետութեան ամենալաւ նեցուկներից մինը լինի, սակայն հակառակը դուրս եկաւ։ Ռէյխստագը ձեռնտու է լեհացիների, Ֆրանսիացիների և սօցիալ-դեմօկրատների համար»։ Ռէյխստագի արձակելը այժմ նշանակութիւն չունի և ընտրութիւնները աւելի լաւ հետևանք չէին ունենալ։ «Ընտրութիւնները, ժողովրդի տրամադրութեան բնաւորութիւնը չէ ցոյց տալիս և ռէյխստագի մեծամասնութիւնը չէ ներկայացնում ժողովրդի մեծամասնութիւնը։ Հարկաւոր են ներքին վերանորոգումներ և ուշացնելն անկարելի է։ Չը պէտք է թոյլ տալ, որ ժողովրդի մէջ անբաւականութիւնը տարածուի, որովհետև չի կարելի իմանալ, թէ ինչ կարող է ծագել ապագայում, օրինակի համար Ֆրանսիայում. իսկ եթէ նոյնը, ինչ պատահեցաւ 1792 թուականին։ Եթէ պարլամենտ իրեն անելի առաջարկութիւնները մերժէ, այն ժամանակ մնում է դիմելու առանձին տէրութիւնների օրէնսդրութիւններին»։

—

Կ. Պոլսից հաղորդում են, թէ յունական պարլամենտի կայանալը վատ տպաւորութիւն արեց այստեղ։ Այստեղ քաղաքական շրջաններում ենթադրում են, թէ սուլթանը անշուշտ ուլտիմատում կուղարկէ Յունաստանին։ Երեկ սուլթանի նախագահութեամբ մինիստրների նիստ կայացաւ, որը շարունակուեցաւ մինչև կէս գիշեր։ Ադրիանապօլսի վալիաթում գտնուած զօրքին հրամայուած է պատրաստ մնալ պատերազմ գնալու համար։

—

Մարտի 17-ից Վիեննայից հեռագրում են, թէ Բ. Դուռը խորհուրդ է տուել բուլղարական իշխանին չ'ընդդիմանալու պետութիւնների վճռին։ Երեկ իշխանը պատասխանեց, թէ իւր պետութիւնների մէջ ծագած անբաւականութիւնների պատասխանատուն ինքն է և խնդրում է թոյլ տալ նրան ազատ գործելու։ Այստեղի դիպլօմատիկական շրջաններում երկիւղ են կրում, թէ գուցէ իշխան Ալէքսանդրի Ներսայի կամքի ընդդիմութիւնը ազդեցութիւն ունենայ և Ցունաստանի վերայ։ Աթէնքից ստացած լուրերը հաղորդում են, թէ շարժողութիւնը այնտեղ հասել է վերին աստիճանի. խռովութիւնների յանցաւոր համարում են Բատտենբերգեան իշխանին (Ալէքսանդրը) որի նպատակն է ամբողջ Բալկանեան թերակղզում պատերազմական խռովութիւններ և վրդովմունքներ յարուցանել։ Ինչպէս լսվում է պետութիւնները վճռել են այդ vabanque խաղին վերջ տալու. «Polit. Corresp.» լրագրի ասութեամբ, պետութիւնների այդ նպատակին համաձայն է և Ֆրանսիան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրների և ամսագիրների բառարան։ Ներկայումս Իտալիայում Նիկողայոս Բերնարդինի անունով մի պարոն աշխատում է կազմելու աշխարհիս վերայ հրատարակուող բոլոր լրագիրների և ամսագիրների մի ահագին բառարան Dizinario di tutti i giotnali delmondo վերնագրով, հանդերձ լրագրների պատմութեամբը, նրանց նշանակութեամբը, խմբագիրների և նրանց աշխատակիցների կենսագրութեամբը։ Բերնարդինը այդ հսկայ աշխատութիւնը արդէն սկսել է և ձեռքի տակ ունէ մօտ 10,000 զանազան տեսակ և օտարազգի լրագիրներ ու ամսագիրներ։ Իւր աշխատութիւնը աւելի կատարելագործելու համար Բերնարդինին խնդրանօք դիմել է Ռուսիային, ուղարկել նրան այնտեղ հրատարակուող յայանի և պետական լրագիրներից մի մի օրինակ։ Բերնարդինի հասցէն. Lecce (Italia), Via delle Bombarde, 27.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
24 Մարտի.

ԵԱԼՏԱ. Երեկ Նոցին կայսերական մեծութիւնները Թագաւոր Կայսրը, Կայսրուհին, Թագաժառանգի, միւս օգոստափառ որդիերանց, մեծ իշխաններ Սերգէյ և Պաւել Ալէքսանդրովիչների, մեծ իշխանուհի Ելիսաւէտա Ֆեօդօրովնայի, պալատական և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրների և բազմաթիւ սվիտի հետ ժամանեցին Սեվաստօպօլ։ Երկաթուղու ճոխ զարդարած կայարանից օգոստափառ ճանապարհորդները զօրքի և ամբոխի «կեցցէներով» հասան մինչև նաւահանգիստ, ուր դրօշներով, բոյսերով և գորգերով զարդարած պավիլիօնի մօտ դիմաւորեցին նրանց ծովային մինիստրութեան կառավարիչը, Օդեսսայի զինուորական շրջանի հրամանատարը և այլ անձինք։ Քաղաքագլուխը ներկայացրեց Նոցին Մեծութիւններին աղ ու հաց, իսկ կանայք ներկայացրին կայսրուհուն մի քանի փունջեր։ Կէս օրուայ մօտ Նոցին Մեծութիւնները և Բարձրութիւնները «Память Меркурія» պատերազմական նաւով ուղևորուեցան դէպի Եալտա։ Այդ նաւին ուղեկցում էին «Забіяка» նաւը, կամաւոր նաւատորմիղի «Москва» շոգենաւը և «Пендераклія» շոգենաւը։ Այստեղ նաւահանգստի մօտ շինուած էին շքեղ պավիլիօն և յաղթական կամար։ Արքայական ճանապարհը սփռած էր մանուշակներով։ Նոցին Մեծութիւններին դիմաւորեցին Տաւրիկեան թերակղզու ազնուականութեան բոլոր ներկայացուցիչները և ազնուականները, քաղաքագլուխը ներկայացրեց աղ ու հաց, նուագեց երաժշտութիւնը։ Տեղական մահմեդական ազնուականները կրում էին ազգային հագուստ։ Տիկինները ներկայացրին Կայսրուհուն մի քանի փունջեր։ Կայարանից օգոստափառ հիւրերը ուղևորուեցան դէպի Լիվադիա կառքերով։ Նոցին Մեծութիւնների գալստեան առթիւ, քաղաքը կենդանացել էր և լուսաւորուած էր ճրագներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երեկ վերջացան այստեղ բժիշկների և երկաթուղիների ներկայացուցիչների ժողովի պարապմունքները։ Նախագահի ընկեր Դօբրօսլավինի խնդրեց նախագահից մէջնորդելու, որ ժողովը ամեն տարի կայանայ, իսկ առողջապահական կօմմիսիայի նախագահ Կետգրիցը ցանկութիւն յայտնեց, որ այդպիսի ժողովներին հրաւիրուեն մասնակցելու և մասնաւոր ճանապարհների բժիշկները։ Գեներալ Բօգդանովիչը պատասխանեց, թէ պարտականութիւն կը համարէ յայտնելու ժողովի գիտաւորութեան մասին, յետ որոյ ճառ խօսեց, որը ընդունուեցաւ բուռն ծափահարութեամբ։

ԲԵԼԳՐԱԴ. Րիստիչի նոր մինիստրութեան կազմակերպութիւնից յանկարծակի հրաժարուելու պատճառը դեռ ևս պարզուած չէ։ Ասում են որ զինուորական վարչութեան հարցերի վերաբերեալ տարաձայնութիւններ են ծագել։ Վերջնականապէս յանձնուեցաւ Գարաշանինին կազմակերպելու մինիստրութիւնը։ Նոր մինիստրութեան կազմակերպութեան մէջ ինչպէս երևում է կը մտնէ և Խօրվատովիչը։

ՊԱԼՏԱՎԱ. Այստեղ յունիսին կը բացուի խաշնարածների և բրդեգործների ժողովը։ Ծրագրի մէջ ներմուծած է խաշնարածութեան վերաբերեալ հարցը։

ՎԵՆՆԱ. «Гачукъ» լրագրի ասութեամբ, Ռուսիան բօլղարական իշխանի պահանջներին ընդդիմանում է միայն խաղաղութիւնը պահպանելու նպատակով։

«N. F. Presse»-ը հաղորդում է. թէ թրքական զօրքերը յունական հողաբաժնում դիրք են բռնել։ Ենթադրում են, թէ թիւրքերը մըտադիր են ընդհարումն յարուցանել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Երեք ամսական դրամարժէքը

Լօնդօն $23\,^{23}/_{32}$ և $23\,^{18}/_{16}$ $23\,^{3}/_{4}$
Համբուրգ $202\,^{3}/_{4}$ $203\,^{1}/_{2}$ $202\,^{7}/_{8}$
Պարիզ $249\,^{3}/_{4}$. $250\,^{3}/_{8}$, 250.
Պօլուիմպերիալ 8 ր. 28 կ. սակ.
Մաքս. կուպոն. 8 ր. 30 կ. սակ.
Արծաթ . . . 1 ր. 26 կ. սակ.
Բօրսային գիս. $4\,^{1}/_{4}$ և 6 %
Պետակ. բանկի 5 % տոմսեր.
1-ին շրջանի 99 ր. 87 կ. սակ.
2-րդ » . . $99\,^{1}/_{2}$ ր. կ. սակ.
3-րդ . . . 99 ր. 37 կ. գն.
4-րդ » . . 99 ր. 37 կ. գն.
5-րդ » . . 99 ր. 37 կ. գն.

Նա դարձեալ շարունակում էր օձի վիզը սեղմել, որ յանկարծ շուռ գալով սկսեց իւր երկայն մարմնով ընկնել և խփել սենեակում գտնուած բոլոր իրերին՝ կահ-կարասիքին, հայելուն.... և յետոյ կրկին փաթաթուեց Սէր-Ռիչարդի ոտներովը, այնպէս որ ցաւից քիչ էր մնացել որ սա ուշաթափուէր։

Նեարդերի ահագին և խիստ լարեցողութեամբ նա հում էր տալիս օձի վիզը, այնպէս որ իւր մատների տակ զգում էր նրա պարանոցային ողները։ Այս պատճառաւ նա ոչ մի րոպէ իւր աչքերը չէր հեռացնում օձի կրակոտ և ահռելի աչքերից։

Օձն էլ, որպէս և մարդը, առանց օդի չէ կարող ապրել, հետևապէս բուկից խեղդուել։ Օձի ոյժը պակասեց, արեան շրջանառութիւնը կտրուեց և վերջապէս նա անզգայ դարձաւ։ Սէր-Ռիչարդը մատերը ուղղեց և օրօրուելով սենեակից դուրս եկաւ։

Կէս ժամից յետոյ իւր մի քանի ընկերներով վերադարձաւ, որոնք կամենում էին այս օտարոտի տեսարանը տեսնել։ Զգուշութեամբ, ռէվօլվերներով զինուորուած, դուռը բացին։ Որպէս մեծ օղակ գորգի վերայ անշարժ ընկած էր օձը։ Նա սատկած էր։ Չափելով նրան, տեսան որ տասն և հինգ ոտնաչափից փոքր ինչ պակաս էր։ Տանտրոյ ընկերներից մինը, որ բնագիտութիւն էր ուսումնասիրում, բացատրեց, որ կենդանու կատաղութեան նայելով, պէտք է որ շատ ժամանակ առանց կերակրի մնացած լինէր։ Օձը արկղի մէջ մուտք գործելու համար շատ մանր անցքեր գտաւ։

Սէր-Ռիչարդը մի քանի ամսից յետոյ իմացաւ, որ մի հնդկացի առևտրական նաւով եկել էր Անգլիա մի համանման արկղով։ Սէր-Ռիչարդի հասցէն Լօնդօնում դժուար չէր իմանալ և յետոյ ինչպէս իմացան հնդկացին ինքն էր արկղը բերել։

Այլ ևս կասկած չկար, որ այս այն սիպայն էր, որ մահու չափ անպատուած լինելով անգլիացի արիստոկրատից վերոյիշեալ օտարոտի միջոցն էր ընտրել վրէժխնդրութեան համար։

Սէր-Ռիչարդը հրամայեց օձի մորթը հանել և մաշկը լցնել, որպէս զի միշտ կարողանայ յիշել իրեն հետ Արևելեան Հնդկաստանում պատահած արկածը և կեանքի դէմ փորձանքը, որի մասին նա չէր էլ մտածել։

Նա այլ ևս իւր թշնամու մասին ոչինչ չլսեց։

Պէտք է կարծել, որ նա նորից հայրենիք վերադարձաւ, Սէր-Ռիչարդի անակնկալ մահուան մէջ համոզուած լինելով և կամ անգլիական ոստիկանութիւնից փախենալով։

Թարգ. Թ. Ա-տ.

Զաքաթալա

100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի 99½ ր. — կ. սակ.
2-րդ » . . 99½ ր. — կ. սակ.
3-րդ » . . 99¾ ր. կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . . . 223¾ ր. սակ.
« » 2-րդ . . 220 ր. — սակ.
5½% ռենտեր . . . 104 ր. սակ.
Ոսկէ ռենտ. 180½ ր. կ. սակ.
Բօրսայի դրութիւնը ամուր է:

25 Մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Լիւբլինի նահանգապետ Ստամերովը և Սուվալի նահանգապետ Տխօրժեվսկին նշանակուած են մէկը միւսի տեղ:

Պետերբուրգի սլավօնական բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը միաձայն հաստատեց իւր կօմմիսիայի այն առաջարկութիւնը, որ 1888թ. յուլիսի 15-ին հանդիսաւոր կերպով տօնախմբուի ռուսական ազգի 900 տարուան մկրտութեան օրը: Հանդէսը կունենայ բուն եկեղեցական բնաւորութիւն: Հանդիսի կենդրոնները կը լինեն Կիեվ և Տավրիկեան Խերսօնէս քաղաքները: Վճռուած է խնդրել Ս. Սինօդից, որ յօբելեանի օրը օծուին Կիեվում և Խերսօնէսում շինուող յանուն Ս. Վլադիմիրի տաճարները:

ՑԱԼՏԱ. Նոցին Կայսերական Մեծութիւնները և բարձրութիւնները մարտի 23-ին Լիվադիա ժամանելուն պէս, այցելեցին արքունի եկեղեցին: Երեկուայ ծովային սաստիկ ալիքները դժուարացրին բեռների դէպ ափ դուրս բերելը:

Կ. ՊՕԼԻՍ. Կօնֆերենցիայի նիստը շարունակուեցաւ ընդամենը 45 րօպէ: Բոլոր պետութիւնների ներկայացուցիչները ստորագրեցին արձանագրութիւնը, որով իշխան Ալէքսանդրը հինգ տարի ժամանակով նշանակվում է ընդհանուր նահանգապետ Արևելեան-Ռումէլիայում:

26 Մարտի

ԲԵԼԳՐԱԴ. Արտաքին գործերի նոր մինիստր Ֆրանկասովիչը ուղարկեց օտար տէրութիւնների մօտ Սերբիայի ներկայացուցիչներին և նրանց ներկայացուցիչներին Բելգրադում շրջաբերական, որով յայտնում է ցանկութիւն պահպանելու բարեկամական յարաբերութիւններ ամեն պետութիւնների հետ:

ԱԹԷՆՔ. Յունաստանի անկախութեան տարեդարձը կատարուեցաւ հանդիսաւոր կերպով, ոչինչ ցոյցեր չեղան, բացի այն, որ լրագիրներում հրատարակուեցան դէպի պատերազմ մղող յօդուածներ:

Կ. ՊՕԼԻՍ. Բօլղարիայի իշխանի պատասխանը, պետութիւնների վրճռի վերաբերութեամբ, դեռ չէ ըստացուել:

ԱԹԷՆՔ. Երեկ երեկոյեան տեղի ունեցան բազմամարդ միտինգներ պատերազմի օգտին:

ԲԵԼԳՐԱԴ. Այժմեան սկուպշչինան արձակուեցաւ, նոր ընտրութիւնները նշանակուած են ապրիլի 26-ին:

Խմբագիր հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Ц. 4657) 50—5

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՍԻՍՈՒԱՆ. Հ. Սամուէլ Քանթարեանի ՆՈՐԱՏԻՊ Քառագիր գաղղիերէնէ ի հայ թարգմ: Երկրաբանութիւն և Բուսաբանութիւն Հ. Սափարեանի, և ուրիշ գրեանք Վենետկոյ Մխիթարեանց կգտնուին Ստեփան Սափարեանի մօտ կանդիտերի Իսզբաշովի խանութում. Միջին փողոցում: Ցանկացողները կարող են դիմել այնտեղ: 5—2

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ:

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին:

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ. — 11 րոպ. և 6 ժ. — 43 րոպ. մէջը:

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին: Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5 — 25 րոպ.

(Ц. 2077) 50—8

Երևանեան հրապարակի վերայ գեներալ Տէր Աստուածատրեանցի տան Գաբրիէլ Ավշարեանցի № 5 մագազինում, ծախվում է ամեն տեսակ հագուստներ խիստ ձեռընտու գներով: 4—2

ПРОТИВЪ ГОЛОВНОЙ и ЗУБНОЙ БОЛИ:
МИГРЕНЕВЫЙ КРИСТАЛЛЪ
„САНИТАСЪ"
(также отъ комаровъ).
ДЕПО ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ И АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.
Главный складъ: Москва, Кузнецк. мостъ, д. Соколова „САНИТАСЪ".
!!Перепродавцамъ скидка!!
!!Требуйте только „САНИТАСЪ"!!

ՍԱՆԻՏԱՍ և Ատամնալուաթ ղեղ Լ. Է. ԱԴԵԼՀԷՅՄԻ կարելի է ստանալ բարձրագոյն հաստատուած Կովկասեան դեղավաճառ ընկերութեան գլխաւոր պահեստում:



ЗУБНЫЯ СРЕДСТВА
Л. Э. АДЕЛЬГЕЙМЪ.
Лучшія гигіеническія средства для укрѣпленія и сохраненія зубовъ и уничтоженія дурнаго запаха во рту.
Депо во всѣхъ городахъ Россіи.
Главный складъ: Москва, Кузнецк. мостъ, д. Соколова.
!!Перепродавцамъ скидка!!

50—44

ՊԱՀԵՍՏ
ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆ
ՑՐԻՍՏԵՐ ԵՒ ՌՕՍՄԱՆ



Նոր պատենտի տէր կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԱԼ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ
Ծախվում է
ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ
Միակ գործակալ՝ Է. Ֆ. Աուֆէրման. Թիֆլիս Երևանեան հրապարակ. տ. Տէր-Աստուածատրեանի, 100—45

ԲԵՐԻՕԶԻ ԲԱԼԶԱՄ
ԲԺԻՇԿ ԼԵՆԳԻԼԻ
Մի շիշի գինն է 1 ր. 65 կոպէկ:

ՕՊՊՕ ՊՕՄԱԴԱ ԲԺԻՇԿ ԼԷՆԳԻԼԻ ԿՕԼ-ԴԷ-ԿՐԷՄԻ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻՑ լաւը, մի շիշը 1 րուբլի:

ԲԷՆԶՕԵՎ ՕՃԱՌ ԲԺԻՇԿ ԼԷՆԳԻԼԻ ¼ կտորը 50 կ., ½ կտորը 35 կոպէկ:

Պ. պ. օտարաքաղաքացիները ուղարկում են պօստային ծախքը: Ծախվում է Ռուսիայի բոլոր դեղօրէից մագազիններում: Մոսկուայում ծախվում է Ր. Կեօլերի և ընկ. մօտ, նաև Ֆէրրէյնի, Բրուանի, Մատէյսէնի, Գետլինգի, Կերստանի, Շտօկմանի և Լեմանի, Լիւտեր և Հիրշֆէլդի, Բեզբարդիսի, Բօրխարտի և այլոց մօտ.

(Ц. 11098) 25—7

Իսկական կարեմեքենաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ" ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ



ԱՐԺԱՆԱՑԱԾ
աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում
ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ
Կարևոր ընկերներ տան տիկինների և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար
ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ:
Բագւում. Միքայէլեան փողոցում, Միրզա Աւագեանի տ. | Բաթումում. Պօլիցեական փողոցում, Թէրզի օղլու տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ. | Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վերայ:
և նրանց ճանապարհորդող գործակալների մօտ

արտօնութիւն ստացած
վաճառական դրօշմը.

ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ
Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ

ԶԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԽՈՇՈՐ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաներն ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ: 2) Գները ամենաչափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ: 3) Ամեն տարի ծախվում է մօտ 700,000 հատ: 4) Մեքենայի յաջողութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան: 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են: 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար: 7) Այս հռչակուած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել: Գնողները կարող են, եթէ կամենումեն դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով դրամը վճարելու համար: 8) Մեքենայի վերայ կատարելապէս և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով: 60—2

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го Марта 1886 г. Տպարան Մ. Դ. Ռօտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К° Гол. пр., д. № 41